



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2024 թվականի N 1933-Ա

**ԱՎԵՏԻՔ ԱՐՇԱԿԻ ՕՍՅԱՆԻՆ, ԱԼՎԱՐԴ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԶԱՆԻՆՅԱՆԻՆ, ԱՐՇԱԿ  
ԱՎԵՏԻՔԻ ՕՍՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՔԻ ՕՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏՎԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ  
ԿԱՌՈՒՑՆԵՐԸ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ,  
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ավետիք Արշակի Օսյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 1442857 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Հազվի բնակավայրերի վարչական ղեկավարի կողմից 17.12.2024թ. տրված տեղեկանքը՝

### որոշումը՝

1. Օրինականացնել Ավետիք Արշակի Օսյանին, Ալվարդ Պատվականի Զանինյանին, Արշակ Ավետիքի Օսյանին և Արմինե Ավետիքի Օսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Հազվի գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-058-0008-0017 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.31105 հա մակերեսով հողամասում, 2015թ. և 2021թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2032EETQLW ծածկագրով հաշվառված օժանդակ շինությունները՝ 84.6 քմ արտաքին մակերեսով (69.1 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակով ավտոտնակը, 56.7

